

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի և Գործադիր կոմիտեի անդամների ընտրության անցկացման ընթացակարգը

Հաշվի առնելով, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ») 21.11.2019թ.-ի Գործադիր կոմիտեի նիստի ընթացքում ՀՖՖ-ի Նախագահը հրաժարվել է ՀՖՖ-ի Նախագահի պաշտոնից, և Գործադիր կոմիտեի անդամները հայտարարել են ՀՖՖ-ի Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից Գործադիր կոմիտեի նոր կազմի հաստատումից անմիջապես հետո իրենց լիազորությունները դադարելու վերաբերյալ և հիմք ընդունելով ՀՖՖ-ի Կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետը, համաձայն որի, ՀՖՖ-ի յուրաքանչյուր Անդամ կարող է առաջարկել Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի մեկական թեկնածու, ինչպես նաև հիմք ընդունելով, որ Գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ 2019 թվականի դեկտեմբերի 23-ին հրավիրվել է ՀՖՖ-ի Անդամների Արտահերթ ժողով, սույնով ծանուցում ենք ՀՖՖ-ի Անդամների կողմից Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի թեկնածուներ ներկայացնելու հնարավորության մասին:

Թեկնածություններն առաջադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ օրենսդրության և ՀՖՖ Կանոնադրության համապատասխան կարգավորումները, ներառյալ, բայց առանց սահմանափակման, Կանոնադրության հետևյալ դրույթները.

Ընտրությունների վերաբերյալ՝

ՀՖՖ-ի յուրաքանչյուր Անդամ կարող է առաջարկել Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի մեկական թեկնածու: ՀՖՖ-ի յուրաքանչյուր անդամ կարող է Գործադիր կոմիտեում ներկայացված լինել միայն մեկ անդամով:

Գործադիր կոմիտեի անդամի թեկնածու առաջադրվելու համար թեկնածուները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

ա) մինչև թեկնածու առաջադրվելը վերջին հինգ տարիներից երկուսի ընթացքում ակտիվ դերակատարում ունենալ ֆուտբոլի բնագավառում (օր.՝ որպես խաղացող կամ պաշտոնատար անձ).

բ) լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի և բնակվել պետության տարածքում.

գ) լինել առնվազն 25 տարեկան և ունենալ ՀՀ-ում ընտրական իրավունք.

դ) տվյալ պաշտոնի հետ անհամատեղելի որևէ հանցագործության համար նախկինում դատապարտված չլինել:

Գործադիր կոմիտեի որևէ պաշտոնի համար թեկնածությունները և նրանց կենսագրությունները ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարությանն են ներկայացվում համապատասխան ընտրական Ժողովից առնվազն 20 օր առաջ: Թեկնածուների պաշտոնական ցուցակը տրամադրվում է ՀՖՖ-ի Անդամներին Գործադիր կոմիտեի ընտրության համար հրավիրվող Ժողովից առնվազն 10 օր առաջ: Սույն կետով սահմանված դրույթները կիրառվում են նաև Արտահերթ Ժողովի ժամանակ անցկացվող ընտրությունների դեպքում:

Գործադիր կոմիտեի կազմի վերաբերյալ՝

Գործադիր կոմիտեն կազմված է 17 անդամից՝ 1 Նախագահից, 1 փոխնախագահից, 15 անդամից, որոնցից առնվազն երկուսը՝ կին:

Գործադիր կոմիտեի Նախագահը, փոխնախագահը և անդամները պաշտոնավարում են չորս տարի ժամկետով: Նրանց լիազորությունները ծագում են նրանց ընտրության հարցը քննած Ժողովի ավարտից անմիջապես հետո: Անձը չի կարող Նախագահի պաշտոնում պաշտոնավարել երեք ժամկետից ավելի (անընդմեջ կամ ընդհատումներով): Գործադիր կոմիտեի անդամը չի կարող պաշտոնավարել երեք ժամկետից ավելի (անընդմեջ կամ ընդհատումներով): Սույն կետի կիրառման առումով՝ եթե անձը զբաղեցրել է պաշտոնը այդ պաշտոնի համար սահմանված պաշտոնավարման ժամկետից պակաս ժամանակահատվածում, ապա այդպիսի պաշտոնավարման ժամկետը դիտարկվում է որպես պաշտոնավարման մեկ լրիվ ժամկետ:

Գործադիր կոմիտեի անդամը միննույն ժամանակ չի կարող լինել ՀՖՖ-ի որևէ անկախ մարմնի կամ ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարության անդամ և չի կարող նշանակվել/ընտրվել որպես ՀՖՖ-ի Ժողովին որևէ Անդամին ներկայացնող Պատվիրակ:

Կանոնադրության 30-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանությունը հավաստելու համար անդամները պետք է ՀՖՖ ներկայացնեն Նախագահի և Գործադիր կոմիտեի թեկնածուների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները/փաստաթղթերը.

1. Կենսագրություն, ֆուտբոլի բնագավառում գործունեության մանրամասն նկարագրությամբ (մասնավորապես, վերջին հինգ տարիներից երկուսի ընթացքում),
2. Անձնագրի և/կամ նույնականացման քարտի պատճենը (նույնականացման քարտի կամ բիոմետրիկ անձնագրի տրամադրման դեպքում, նաև տեղեկություններ բնակության հասցեի վերաբերյալ),
3. ՀՖՖ-ի Անդամի համապատասխան իրավասու մարմնի կողմից հավաստում, որ առաջադրված թեկնածուն/թեկնածուները համապատասխանում է/են ՀՖՖ-ի Կանոնադրությամբ տվյալ պաշտոնի համար առաջադրված պահանջներին (մասնավորապես, Կանոնադրության 30-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջներին)՝ համաձայն սույն Ծանուցմանը կից ներկայացված ձևի (Հավելված 2),
4. Դատվածության տեղեկանք:

Ծանուցումներ

Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի պաշտոնում ՀՖՖ-ի ցանկացած Անդամի կողմից մեկից ավելի (մեկ Նախագահի և մեկ Գործադիր կոմիտեի անդամի թեկնածուներից ավելի) թեկնածություն ներկայացվելու դեպքում կդիտարկվի միայն ցուցակում առաջին ընդգրկված թեկնածուի թեկնածությունը: Այն դեպքում, երբ ՀՖՖ-ի Անդամի կողմից ներկայացված Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի թեկնածուների ցուցակը չպարունակի նշում առ այն, թե նշված թեկնածուներից որն է առաջադրվել Նախագահի, և որը Գործադիր կոմիտեի անդամի պաշտոնում, ցուցակում առաջինն ընդգրկված թեկնածուն կդիտարկվի որպես Նախագահի պաշտոնում ներկայացված, իսկ երկրորդը, համապատասխանաբար, Գործադիր կոմիտեի անդամի պաշտոնում առաջադրված:

Հաշվի առնելով, որ ՀՖՖ Կանոնադրության 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն Գործադիր կոմիտեի անդամներից առնվազն երկուսը պետք է կին լինեն, հետևաբար, ներկայացված կին թեկնածուներից ամենաշատ ձայներ հավաքած երկու թեկնածուները կընդգրկվեն Գործադիր կոմիտեի կազմում, անկախ այլ թեկնածուների կողմից ավելի շատ ձայներ հավաքած լինելու հանգամանքի: Այն դեպքում, երբ առաջադրվել են միայն երկու կին թեկնածուներ, վերջիններս առանց քվեարկության կհայտարարվեն ընդգրկված Գործադիր կոմիտեի կազմում: Եթե ՀՖՖ անդամները Գործադիր կոմիտեի կազմում ընդգրկվելու համար ՀՖՖ-ի Անդամների կողմից կին թեկնածուներ չառաջադրեն, կամ առաջադրեն երկուսից պակաս թեկնածուներ, ապա կին թեկնածուները կառաջադրվեն ՀՖՖ-ի Գլխավոր քարտուղարի և Գործադիր

կոմիտեի գործող կազմի կողմից՝ Ժողովի նախապատրաստման գործընթացում: Այս դեպքում կառաջադրվեն 4 թեկնածուներ, որոնց կազմից Ժողովի կողմից կընտրվեն 2-ը:

Հիմք ընդունելով, որ ՀՖՖ Կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՖՖ-ի յուրաքանչյուր անդամ կարող է Գործադիր կոմիտեում ներկայացված լինել միայն մեկ անդամով և համաձայն ՀՖՖ Կանոնադրության 37-րդ կետի 1-ին ենթակետի Նախագահը համարվում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի անդամ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՖՖ-ի Անդամի կողմից առաջադրված Նախագահի թեկնածուի՝ Նախագահի պաշտոնում ընտրվելու դեպքում, ՀՖՖ-ի այդ Անդամի կողմից առաջադրված Գործադիր կոմիտեի անդամի թեկնածուն չի ընդգրկվի Գործադիր կոմիտեի անդամի ընտրության քվեարկության ցանկում և չի կարողանա ընտրվել Գործադիր կոմիտեի անդամի պաշտոնում:

Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամների ընտրությունից հետո, Նախագահը ընտրված Գործադիր կոմիտեի կազմից Ժողովի ընտրությանն առաջադրում է փոխնախագահի թեկնածուի/թեկնածուների:

Ժողովի անցկացման օրն է 2019 թվականի դեկտեմբերի 23-ը: Ժողովի անցկացման վայրը, օրակարգը և թեկնածուների պաշտոնական ցուցակը ՀՖՖ-ի Անդամներին կներկայացվի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 13-ը՝ համաձայն ՀՖՖ-ի Կանոնադրության 33-րդ կետի 3-րդ ենթակետի և 30-րդ կետի 7-րդ ենթակետի: